


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
 Պուլկարիոյ համար
 Տարեկան ֆրք. 10
 Վեցամսեայ " 5
 Արտասահման
 Տարեկան ֆրք. 12
 Վեցամսեայ " 6
 ԿԱՆԻՒԿ



Պարթիւնք եւ շէն
 արուիր:

Հասցէ
 DIRAN PAPAIZIAN
 RUE DRAGOMAN
 K. STEPAN
 (BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Երէ կ'ուզե՛ք «Հայելի»ին մէջ աղոտ երեւնայ,
 Պարսիք սիրուն եւ ազնիւ դեմք մը ունենայ:

ԱԶԳԱՅԻՆ

Ի Ա. Բ. Բ. Ա. Յ. Ո. Թ. Ի. Ի. Ն. Մ. Ը.

Յարգելի Պ. Խմբագիր.

Մտա օրերս ձեռքս անցաւ «Վերջին թըր-
 բական վայրագութիւններէ փնտտուած տիկ-
 նոջ մը ի նպաստ» վերնագրով վիճակահա-
 նութեան թուղթ մը: Թուղթը ոչ մէկ պաշ-
 անական կնիք չկրեր, յայտնի չէ թէ ընկե-
 րութեան, կուսակցութեան թէ պարզ ան-
 հատի մը կողմէ է. եթէ կուսակցութեան մը
 կողմէ հրապարակելած էր, պէտք էր պաշտօ-
 նական կնիքով վաւերացուած ըլլար, իսկ եթէ
 պարզ անհատի մը կողմէ է, պէտք է այդ
 անհատը և կամ տիկինը մեզ ծանօթ ըլլար,
 որպէս զի մենք տիկիններս ձեռք ձեռքի տա-
 րով պէտք եղած աջակցութիւնը ընէինք:

Ամէն պարագայի մէջ, բանի որ թուղթը
 անվաւեր է, մնոյի պէս ուրիշ աջակցելու փա-
 փաքողներու ալ կասկած պիտի տայ թէ մի
 գուցէ աս ալ նոր խաղ մը ըլլայ խաչագող-
 ներու կողմէ՝ հարիւրաւոր ֆրանքներ դարձեալ
 հրապարակէն կորցելու համար:

Ուստի մեր կասկածները փարատելու և
 ժողովուրդը զգուշացնելու համար խորհեցանք

տեղական թերթերու միջոցաւ հրապարակ
 հանելով լուսարանիլ խնդիրը:
 Յարգանքներով
 Այրի տիկին Մարիամ Միհասեան
 1900 Յնվր. 12
 Յ. Գ. — Մէյմէկ օրինակ ալ շրջուած են
 Իրաւունքի և Հարժումի:

Հայելի — Վերոգրեալ նամակը
 ստանալով հետաքրքրուեցանք եւ յա-
 շտեցանք ձեռք ձգել այդ վիճակահա-
 նութեան թուղթերէն հատ մը, որուն
 պատճէնն է հետեւեալը.

Վ ի ճ ա կ ա հ ա ն ու ռ թ ի ռ և

Ի նպաստ վերջին թրփական վայրագու-
 թիւններէ փնտտուած սիկնոջ մը:

1 հաս շֆեղ ասեղնագործեալ սեղանի
 ժածկոց.

1 հաս շֆեղ ասեղնագործեալ բարձի
 երես բարձեայ.

Յիշեալ 2 կտորները կարծես 120 Քրակի:
 Իւրաքանչիւր բաժին 1 Քրակի:

Մենք վստահ ենք որ շրջաբերութեան
 հանուած այս ձեռագիր վիճակահանու-
 թեան ցուցակէն — որու վրայ ի մէջ այ-
 լոյ ոչ թուական և ոչ իսկ քաջուելիք
 տեղը նշանակուած է, — ժողովուրդի

գիտակից դասակարգը չի խաբուիր, եթէ խաբուող մը կայ, այն ալ միամիտ մասը պիտի ըլլայ, որ աւանդ, ամեն ատեն խուզուող գառնուկն է:

— Ազգ. Պատրիարքարանը այսօր կը մատակարարէ 40 որբանոց և նպաստ կու տայ 30 գաւառային աղքատիկ զըպրոցներու . այս պատճառաւ կեդրոնական Վարչութիւնը նորէն կոչում կընէ աղգին ունեւոր դասակարգին բարեսիրական զգացումներուն և լաւատաճեանութեանը:

«Անահիտ»ի մէջ կը կարդանք.

«Պուէն հետեւեալը կը տեղեկագրեն.

«Այս օրերս Բ. Դուռը պաշտօնապէս հապորդեց Պատրիարքարանին թէ Վանայ շրջակաները նոր ջարդեր տեղի ունեցեր են՝ պարսկական սահմանագլխէն 50 զինուած հայ յեղափոխականներու ճաճկահայառտան անցներուն հետեւանքով»:

— Թաթար բազարճըգէ կը գրեն թէ, հոն դանուող Գէորգ Վ. Նալբանտեան՝ հակառակ ժողովրդեան բազանաց՝ չուզեր եղեր թաղ. խորհրդոյ ընտրութեան ձեռնարկել, թերևս համոզուած ըլլալով որ իր ուզած մարդիկը չընտրուին: Նամակագիրք այս մասին Պուկարիոյ այցելու Հովիւին ուշադրութիւնը կը հրաւիրեն:

Դանուարի յորդումը

Ռուսճուքէն մասնաւորի մը եկած նամակէն կը տեղեկանանք թէ այս երեքշաբթի առտու յանկարծ Դանուարը յորդեր, ջուրերը մինչև 1 ուկէս մէթր բարձրացեր և 2—3 կանգուն երկայնութեամբ սառի կտորներ շիջներու և

նաւակներու զարնուելով, բաւական վրնաս պատճառեր են: Լօմի ջաղացքին առջև շիջ մը և մէկ քանի նաւակներ խորտակուեր որ ցամաքը ինկեր են: Տատօին խրճիթը ու աղիւսները ամբողջովին վնասուեր են: Լօմը բաւական յորդեր է, սը եթէ քիչ մըն ալ բարձրանայ, կը վախցուի որ մեծ աղէտներու պատճառ ըլլայ: Լօմէն ու Եէնի մահալլէէն շատ տուներ պարպուեր են:

ԱՅՅԵՏՈՄՍԵՐԸ

Քաղաքակիրթ երկիրներու մէջ ընդունաուած սովորութիւն մ'է որ նոր տարւոյ առթիւ, ազգականներն, բարեկամներն ու ծանօթներն իրարու այցետոմս կուղարկեն—եթէ կարող չեն անձամբ այցելութիւն մը ընել—նոր տարին շնորհաւորելու:

Պարիզի մէջ սովորութիւն է, Դեկտեմբերի 25էն մինչև Յունուարի վերջն այցետոմս զրկել. բայց աւելի կանոնաւոր է նոր տարիէն ութ օր առաջուընէ սկսիլ և վերջացնել մինչև յունուար 15ը: Այս առթիւ փոստատուներու մէջ մասնաւոր տեղ մը կը յատկացուի միայն այցետոմսերն ընդունելու և հաստատութեան փորձաւորներն տասնապատիկը կ'աւելնան:

Այս տարի 30 միլիոնէն աւելի այցետոմսեր փոստատուէն անցած են, մինչև յունուար 15ը. փութանք աւելցնել նաեւ թէ, դեռ այս վայրկենիս վաթսուն օգնական գործաւորներ այդ պրիւքթօյի կտորներով ըզբազած են:

Մինչև այս տարի այդպիսի պատկառելի թիւ մը—30 միլիոն—ունեցած չէր այցետոմսերու երթեւեկութիւնը, այս տարի անցեալ տարուընէ 2 միլիոն աւելի կայ:

Եւ դեռ կան անձինք որք կը պնդեն թէ այցետոմս զրկելու սովորութիւնը նոր տարւոյ առթիւ ինչպիսի վրայ է:

Սէսի և Մէլիք Ս. Դաւիթ Բէկ

Կ Ա Ղ Ա Ն Դ Չ Է Ք



Տարեգլխոյ առթիւ՝ բոժոժիկի կողմէ
հետեւեալ կազանդէքները զրկուած էին ի-
րենց հասցէներուն :

Մ Ա Ս Ն Ա .

Մըսթըր շնչակին . — Զէյթունեան հան-
գանակութեան պէս իւրոտ կտոր մը :

Սըր Մարտին . — Թուղթէ բերդ մը . ա-
նոր ետեւը սպասողական դիրք բռնելու հա-
մար :

Պարոն Գրօշակին . — Ռէօյգինկէնեան ծա-
ռագայթներու յատուկ դիտակ մը , խաչա-
գողները տեսնելու համար :

Միւսիւ Արմէնիսին . — Օժտնդակ գանձա-
նակին հասցիները ապահով պահելու հա-
մար սիւնըթալը և խուժու գացա մը :

Մարբիզ Լառմէնիին . — Երկու համախոհ,
իր նպատակին հասնելու համար :

Պարոն Նոր Կեանքին . — Երեք խաթը
մանթարապատ բոթին մը , Եւրոպայէն Ափ-
րիկէ երթալ գալու համար :

Միւսիւ Անահիտին . — Մուսայ մը որ զին-
քը ներշնչէ գրելիք քաղաքական յօդուածնե-
րը տեղի յարմար չըլլալու համար :

Գերյարգի Հանդէս Ամօրեային . — Կար-
դացածնին հասկցող կարգ մը բաժանորդներ ,
Վերապատ. Բազմավէպին . — Հնութեան
միտալ մը :

Տիար Բանասերին . — Զոյգ մը զօրթոզ
տեղիներէ, գրական փշոտ ասպարէզին մէջ
անսայթաք քալելու համար :

Պարոն Համալսարանին . — Գրական վար-
ժութիւն մը :

Միւսիւ Չայն Հայրենեացին . — Հայկական
տափուլ զուռնա մը , իր ձայնը լսել տալու
համար :

Տիար Հայրենիքին . — Բուսուլալը աշխար-
հացոյց տախտակ մը , հայրենիքին ճամբան
գտնելու համար :

Խափակա Արշայոյսին . — Էլ պօշ անպարի՛
Ֆիյ տիպիզ բիլէ :

Էլհաս Փիւնիկին . — Հավատիս գթիր՝ մաթ-
պաս մաֆիշ :

Քիրիյէ Միութիւնին . — Իր անիրականալի
առաջարկներու խոշոր պարութեան պահելու
համար խաւար մը :

Կօսթիւն Իրաւունքին . — Խոշորացոյց մը,
թերթին մէջ երեւցող տպագրական սխալ-
ները տեսնելու համար :

Ամիրալ Շարժումին . — Էճէլ պէշի մը ,
որպէս զի կարգաւ հօն մտնող խմբագիրները
երեւցունէ :

Եղբայր Հայելիի . — Տէսթէ մը ասեղ,
ան աս ասղնտելու համար :

Մ Ա Ս Ն Բ .

Վտոնայի ազգ. երկսեւ վարժարանին . —
Սօֆիայի վիճակահանութեան Ա. պարգևը :
որպէս զի պիւտճէն նորէն չի բացուի ու վնր-
ժարանները քանի մը ամիսներ ալ գոց չմնան :

Պաշտօնէ դադարեալ ուսուցիչներուն . — Մէյ
մէկ տուփ Հօլլէի համբերութեան դեղա-
հատ (հապ), առտու իրիկուն կլլիլու համար :

Պաշտօնի մէջ վերահաստատեալ ուսուցիչ-
ներուն . — Ֆրանքլինի խնայողական խրատ-
ներու մէյմէկ հաւաքածոն , գլխէն ու պոչէն
կրճատեալ ամսականներով իճարի ընելու հա-
մար :

Վարժարանաց մէջ ձրի դասախօսութեամբ
շունչ հատցունել ուզող օգնականներուն . —
Մէյմէկ օգնական տիւտիւկ . (էթէրսէ էյի
տիւտիւկ) :

Երկսեւ ուսանողաց . — Չէշնիճի պաշիի
վկայական ու մէյմէկ զօրաւոր ստամոքս , փո-
փոխութեան ենթակայ ծրագիրներով պատ-
րաստուած ուսումնական կերակուրները գար-
մագարը կերպով մարտելու համար :



Հայկական սրճարան և ճաշարան
ընթերցարան , պիլարատօ , կլլիւկ եւ
ընտիր սիկարներ : Հաստատութիւնս
բաց է ամեն օր՝ առաւօտեան ժամը
5էն մինչև 2 : Երրորդ Ափիւթիւ 388 :

28րդ փողոցին մօտիկ ի Նիւ—Եօրք :

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք



Կրկնաճանաչման եզակակի դաս
 Ար ցեղի ունեցաւ այս օրերս Աթէնքի մէջ :
 — 60 տարեկան մարդ մը Հիւանդանոց ըն-
 գունուեցաւ իր կնոջ խնդրանքը : Ծանր հի-
 ւանդ էր , և մէկ—երկու օր ետքը լուր և-
 կաւ թէ մեռած է : Այրի կինն հոգ չըրաւ
 յուղարկաւորութեան մասին , զոր Հիւանդա-
 նոցի պաշտօնէութեան թողուց , և շարժ մը
 ետքը կարգուեցաւ զինքը մխիթարել փութա-
 ցող աւելի քան 50նոց սիրականի մը հետ :
 Ամէն բան կարգին էր ինչուան անցեալ
 օր , երբ թիւ 1 էրիկը , որ մեռած չէր , այլ
 քիչ քիչ ինքզինք գտած էր , տուն եկաւ .
 բայց տեսաւ որ իր տեղն ուրիշ մը կանգնե-
 ր է : Իր կինը մարեցաւ ինկաւ՝ կարծելով իր
 մեռած էրկան ուրուականը տեսած ըլլաւ .
 մինչ երկու էրիկները «սեփականութեան ի-
 րաւունքի» մասին կռուի բռնուեցան : Թիւ 1
 էրիկըն հարցնելով թիւ 2ին թէ ի՞նչ իրա-
 ւունք ունի իր կնկան վրայ , քանի որ ինք
 ողջ է , և թիւ 2 հարցնելով միւսին թէ ի՞նչ
 իրաւունք ունի . . . մեռնելէն ետքը ողջնա-
 լու . զի եթէ անկանոն , անսովոր բան մ'է որ
 էրիկը ողջ եղող կին մը ուրիշ էրկան մը պատ-
 կանի , ա՛լ աւելի անկանոն , ա՛լ աւելի ան-
 սովոր չէ . . . մեռնելէն ետքը ողջնալ : Այս
 տա՛ր վէճը հետզհետէ ա՛յնքան աւելի տաք-
 ցաւ որ քիչ մնաց զիրար պիտի բզկտէին 25
 — 30նոց անհամբեր պջրուհիին 50—60նոց
 երկու էրիկները , եթէ զրացիք , յետոյ ոս-
 տիկանք , բարեբախտապէս չհասնէին կռուուն
 վայրն և երկու բաջամարտիկներն իրարմէ չը
 բաժնէին : Երեցապոյն էրիկը փութաց ի գա-
 տարան , ամբաստանելով իր կինն և անոր նոր
 էրիկը իբրև կրկնամուսին : Բայց այս դատ
 զեն չտեսնուած , կրկնապէս դժբախտ մարդը
 սրտին բուռն յուզումէն կաթուածահար ե-
 ղաւ մեռաւ , (այս անգամ՝ վերջնապէս , —
 ցնոր անօրինութիւն) : Գատը «ի բացակայու-
 թեան Ա. էրկան» տեղի ունեցաւ անցեալ

շաբթուն . բայց թիւ Բ.ն և կինն տնայարտ
 արձակուեցան , հաստատելով որ երբ կար-
 գուեցան անգեկութիւն չունէին Ա. էրկան ի
 կեանս ըլլալէն : Բայց հիմա խնդիր է թէ եր-
 կորդ ամուսնութիւնը , որ կնքուած ատենն
 առաջին էրկան մը դոյութեան պատճառաւ
 ապօրէն էր , հիմակ անոր մահովը վաւերու-
 կան եղած է արդեօք :

Սարդին սնունդի . — Եթէ մարդս իր
 մեծութեանն ու ծանրութեանը համեմատու-
 թեամբ՝ սարդին 24 ժամուան մէջ առած սը-
 նունքին չափով սնունդի պէտք ունենար ,
 յայնժամ նախաճաշի ատեն պէտք էր հորթ
 մը լման ուտեր ու ճաշի ատեն հորթ մը եւ
 հինգ ոչխար . իսկ ընթրիքի ատեն երկու եգ,
 ութը ոչխար , չորս այծ և չորս տակառ ձուկ
 առնելու էր : (Փառք տանք Աստուծոյ որ սար-
 դին ախորժակը մեզի չէ պարգևած) :

ԲԱՌԵՐՈՒ ԵՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ

- Հատախօս — Խօսքի ջաղացք .
- Առածք — Հին սուտեր .
- Փաստաբան — Հնարիչ ստութեան .
- Թախանձանք — Լուծիչ դժուարութեանց .
- Քուռ — Գաշտավայր անկուտեաց .
- Փափաք — Գիմակաւորեալ տափանք .
- Անկարողութիւն — Նախանձ .
- Ժառանգորդ — Յուսացող .
- Անցեալ — Անգործածելի հին հագուստ .
- Ներկայ — Քիչ գործածուած հագուստ .
- Ապաստի — Տակաւին դերձակի ձեռք շան-
 ցած տեսակ տեսակ կերպասե-
 ղէն
- Ծնկակապ — Ոտքի մատանի .
- Բանգէտ — Խնդիրներու սուպրակ .
- Գլխու ցաւ — Թոյլ բերան ընկեր .
- Վշտահար — Որդւոյն անունովը յորջորջող
 հայր .
- Այցելութիւն — Գլխու ցաւութիւն կամ
 սրտնեղութիւն .
- Մուրացիկ — Կենդանի պատկեր ծուլութեան

Բանաստեղծ—Խօսքի գող.
 Վիշա—Աղքատին պատառը.
 Հոգեառ—Խօսքէ չհասկցող մարդ.
 Մեծարանութիւն—Գրոմագլուխ տօլան,
 տրըճոց.
 Բարեպաշտութիւն—Պահքի կերակուր.
 Ճշմարտախօսութիւն—Է բոյս ինչ առելի:

ՋՈՒԹԱՆ

ՋԱՐՄԱՆԱԼԻ ԳՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Վարպետ գողին մէկը, իրիկուան դէմ,
 մինչև ոտքերը ծածկող երկայն բալթօ մը հա-
 գած ու գլուխն ալ նոյնպէս երկայն գըլ-
 խարկ մը դրած, Բէշթայի պանդոկներէն մե-
 կուն զոնէն ներս կը մտնէ գիշերը հոն անց-
 նելու համար:

Պանդոկապետը ամենայն քաղաքավա-
 րութեամբ և հարկ եղած ձևակերպութեամբ
 զայն ընդունելով, մաքուր սենեակ մը կը տա-
 նի, ուր քողը ամենայն անտարբերութեամբ
 յանկողին մտած հանգիստ քուն մը կը քաշէ:

Պանդոկին սպասաւորներէն մին, որ
 պաշտօն ունէր ամեն առաւօտ հիւրերուն հա-
 գուստները մաքրելու, վերոյիշեալին ալ հա-
 գուստները մաքրելէն ետքը, կը թողու կ'եր-
 թայ:

Քիչ մը ետքը գողը կարթննայ և կուգէ
 հագուելի, սակայն բանթալօնը չի գտներ, 'ի
 զուր ասդին անդին կը բնտուէ. բանթալօն չի
 կայ. ուստի զայրութիւ սպասաւորը կը կանչէ
 և սպասանաօք կը հարցնէ:

— Է՛, պարոն, հագուստներս ո՞վ մաք-
 րեց .

— Ես մաքրեցի տէր իմ.

— Ըսել է որ բանթալօնս դուն գող-
 ցար .

— Ես գողցայ մի' . . .

— Կամ դուն գողցնել տուիր, բստ
 որում բեզմէ վատ ուրիշ մը չի մտաւ իմ սեն
 եակս .

— Ներեցէք պարոն, ևս այսքան տա-
 թի երէ ի վեր հոս կաշխատիմ ամենայն հա-

ւատարմութեամբ ու խղճի մտօք, և պանդո-
 կապետ տէրս ինձ վստահ ըլլալուն համար
 յանձնած է այս պաշտօնը:

— Այդ տեսակ խօսքեր իմ ականջս
 չեն մտներ, պէտք է բանթալօնս գտնել, ապա
 թէ ոչ ոստիկանութեան պիտի դիմեմ եւ ըզ-
 քեզ ձերբակալելու հրաման մը հանել տամ:
 Պանդոկապետը, որ ասոնց ազմուկը լը-
 սած էր, «Ոստիկանութիւն» բառին վրայ կա-
 ճա պարէ հիւրին սենեակը մտնել:

— Պարոն կըսէ, գող ելած, ինչ ու-
 նիք, պանդոկին տէրը ես եմ:

— Աւրեմն հիմա ձեզի կը հարցնեմ,
 պարոն պանդոկապետ, կրնա՞ք մաքուր շապիկ
 ոտքը կոշիկ, գլուխը զլխարկ, բալթօ եւ այլն
 ունեցող մէկը հարկաւ բանթալօն մըն ալ հա-
 գած կըլլայ, այնպէս չէ՞:

— Այո, հարկաւ:

— Արդ, առանց երկմտելու կըսեմ թէ
 պանդոկնուդ մէջ գող մը կայ, ըստ որում,
 տեսէք բանթալօնս գիշերը գողցուեր է. ես
 շապիկ—վարտիքով հոս չեկայ. փառք Աս-
 տուծոյ, խնդ ալ չեմ. ուստի շուտ ըրէք
 բանթալօնս գտէք, վասն զի ստիպողական
 գործեր ունիմ, ժամանակը կ'անցնի, պիտի
 մեկնիմ:

Խեղճ պանդոկապետը ուղերձ չուզեր պի-
 տի հաւատար այս խօսքերուն, թէեւ անգամ
 մ'ալ ինքը աչքէ կանցնէ սենեակին չորս կող-
 մը, եւ մինչև իսկ աչքին ծայրովը քովի պար-
 տէզը կը նայի որպէս զի հոն ինկած չըլլայ,
 բայց 'ի զո՛ւր, ուստի, գործը ոստիկանութեան
 չի յանձնելու և պանդոկին անուանը արատ
 չի բերելու համար կը վազէ հագուստավա-
 ճառի մը եւ լաւ տեսակէն բանթալօն մը կը
 գնէ:

— Լաւ, կըսէ հիւրը բանթալօնը հագ-
 նելով, բանթալօնին տեղ նոր մը աօրք, հա-
 պա 300 ֆիօրի՞նս, որ գրպանիս մէջն էր.
 Եթէ զայն եւս չի վճարէք, զարձեալ պիտի
 պարտաւորիմ դիմել առ որ անկ է:

Պանդոկապետը մտածելով որ յետինն
 չար բան գառաջինն պիտի ըլլայ, վկայներով
 պիտի կրնայ հաստատել յաճախորդը թէ հի-

մահուան հազած բանթալոնը իր (Պանդոկապետին) տուածն է, որով գողութիւնը հաստատուելով, գրպանը ունեցած 300 Փիօրինին ալ գողցուած ըլլալը պիտի հաստատուի, ուստի կը պարտաւորի 300 Փիօրինն ալ համբել: Ասոր վրայ գողը կը հարցնէ.

— Հիմա ըսէք, պարտքս որչափ է.

— Պարտք չունիք, պարոն, ազատ էք կը կահագէ պանդոկապետը և դուրը կը ցուցնէ, ուրիշ փորձանքի վրն ալ չի հանդիպելու վախով:

Ու գողը կը մեկնի:

*
**

Մէկ ժամ անցնելէն ետքը նոյն պանդոկապետին բարեկամներէն խոհարար մը, որուն խանութը շոգեկառքի կայարանին ձօտ էր, իրեն այցելութեան կուգայ ու խօսակցութեան միջոցին կըսէ թէ, — Երէկ իրիկուն շոգեկառքէն ելլող բաւական յաճախորդներ ունեցայ, անոնցմէ մէկը, երկայն բալթոյով պարոն մը, փորը կշտացնելէն ետքը գրպանին մէջ կուտ մը չունենալը իմացուց. ըստ պառնացայ, զբեղ ոստիկանութեան պիտի յանձնեմ ըսի. ասոր վրայ, ճարահատեալ, կ'ուզէր նէ բանթալոնս ձեզի ձգեմ, ըսաւ. այո՛, կընդունիմ ըսի, բթիս խնդացուցած չըլլալու համար ու բանթալոնը ոտքէն բաշեցի առի, որ հազիւ 2—3 Փրանք կարժէ, մինչ թշուառական մարդը 5 Փրանքի բան կերաւ —:

Մեր պանդոկապետը հետաքրքրութեամբ այդ մարդուն կերպարանը կը հարցնէ խոհարարին, ու վստահ ըլլալով որ վարպետութեամբ իրմէ բանթալոն մը և 300 Փիօրինը առնող տանող մարդն էր, բերանը բաց կը մնայ . . . թերևս մինչեւ այսօր:

Վիեննա

Թարգմ. Միհրան

Ծ Ի Ծ Ա Ղ



Բնագլխութեան դասարանի մը մէջ.

— Զերմութեան յատկութիւնները որո՞նք են.


— Զերմութիւնը կ'ընդլայնէ, կըն-

դարձակէ և կ'երկնցունէ մարմինները, ինչպէս ցրտութիւնն ալ կը պզտիկցունէ, կը կարճեցնէ զանոնք.

— Կրնա՞ք օրինակաւ մը հաստատել զայս.

— Այո՛, այո՛, ձմեռը մինչդեռ ցըրտութեան պատճառաւ օրերը կարճ են, ամառը ընդհակառակը ջերմութեան պատճառաւ նոյնչափ կ'երկարին:

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ո Ի Կ



Առաջին անսխալ կարդացողին նուէրն է կատակերգութիւն մը:

Թիւ 144 «Հայելի»ի նկարհանուկը կարդալ այսպէս.

«Մեծատուն եւ ագահ մարդը սատանայէն կապուած է»:

13 նամակագիրներէ 8ը անսխալ կարդացեր էին, որք են, Տ. Գ. Աւագեան, Մ. Էնկիպարեան, Ա. Սըվաճեան, Ե. Կիւմիւշեան և Բ. Խաչիկեան Վառնայէն, Պ. Մ. Պոյաճեան Շուշիայէն. Կարապետ Ս. Փափազեան Ռուսձուրէն, Հայկ Տ. Յովակիմեան Տօպրիչէն:

Մ Ո Ւ Է Ռ

ԲՈՒՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ



(Տեսարանն է հրապարակ)

ԱՆՁԻՆՔ

Ծերուն Տօրիձային նշանածը .
 Կերոնիմոս Ծերունին բարեկամը .
 Տօրիձա Ծերունին նշանածը .
 Անդիմոս Տօրիձային հայրը .
 Կոմիտաս Տօրիձային եղբայրը .
 Ռուբենիկ Տօրիձային սիրահարը .
 Փառնակ Պատուելի Արիստոտելեան .
 Մանկասար Պատուելի Պրևոսնեան .
 Երկու դնչուհիք :

ՏԵՍԻԼ Ա .

Ծերուն (Առաջին , ետքը) Գերոնիմոս

Ծեր . — (Տանը մէջ եղողներուն խօսելով)
 Ես հիմա կուգամ, վեր վար աղէկ նա-
 յեցէք որ անկարգ բան մը չպատահի ,
 թէ որ ստակ բերելու ըլլան , շուտ մը
 եկէք պարոն Գերոնիմոսին տունը իմաց
 տուէք ինծի , բայց եթէ ստակ ուզելու
 դայ մէկը՝ ըսէք որ դուրս ելլայ ե մին-
 չև իրիկուն չպիտի գամ :

Գեր . — (Ծերունին վերջին խօսքերն լը-
 սած ըլլալով) Ի՞նչ խելացի հրամաններ
 կուտայ ,

Ծեր . — Օ , օ , օ , պարոն Գերոնիմոս ,
 աղէկ որ եկար , ես ալ քեզ կուզէի տես-
 նել :

Գեր . — Ի՞նչ կայ , խեղ է :

Ծեր . — Միտքս դրած մէկ գործս
 քեզի պիտի բանայի ու աղաչէի որ ու-
 նեցած կարծիքդ յայտնես ինծի :

Գեր . — Շատ աղէկ , ուրեմն հոս ու-
 զածնուդ պէս կրնաք խօսիլ :

Ծեր . — Կաղաչեմ , աղէկ մտիկ քրէ ,
 ինծի կարևոր բան մը առաջարկեցին ,
 զոր առանց բարեկամներու հարցնելու
 պէտք չէ գործադրել :

Գեր . — Շնորհակալ եմ որ ինծի ու-
 ղոջեր ես խնդիրը բանալու . ի՞նչ է նա-
 յինք :

Ծեր . — Բայց կաղաչեմ որ ամենե-
 ւին շողոքորդութիւն չընես , մտքէդ ան-
 ցածը շտկէ շիտակ զրուցես ինծի :

Գեր . — Դուն ատանկ ուզելէդ ետքը՝
 ինծի աւելի աղէկ :

Ծեր . — Շատ դժուար գալու բան է
 երբ մարդ մը իր բարեկամին շտկէ շի-
 տակ խորհուրդ չիտար :

Գեր . — Իրաւունք ունիս :

Ծեր . — Այս ժամանակիս մէջ անկեղծ
 բարեկամ շատ քիչ կը գտնուի :

Գեր . — Ոչմարիտ է :

Ծեր . — Դուն հիմա կը խոստանաս
 շիտակը զուրցելու :

Գեր . — Այո՛ , կը խոստանամ :

Ծեր . — Քեզի ըսելիքս սա է որ՝ կար-
 գուելու ըլլամ նէ՛ աղէկ կըլլո՞յ արդ-
 եօք :

Գեր . — Ո՛վ . դո՛ւն :

Ծեր . — Այո՛ , ես , է՛ ի՞նչ կըսես ա-
 սոր :

Գեր . — Բայց նախ պէտք է որ բան
 մը ըսես ինծի :

Ծեր . — Ի՞նչ պիտի ըսեմ .

Գեր . — Քանի՞ տարու ես :

Ծեր . — Ո՛վ . ե՛ս . իրաւոր չիյտեմ ,
 բայց սա գիտեմ որ ուժս տեղն է :

Գեր . — Տէր ողորմեա , քիչ շատ քա-
 նի տարու ըլլալդ չե՞ս գիտեր :

Ծեր . — Ձէ , ո՛վ միտքը պիտի պահէ :

Գեր . — Կայնէ ես հիմա կը գտնամ ,
 մենք իրար ճանչցանք նէ , քանի՞ տարու
 էիր :

Ծեր . — Քսան տարու , քսանէն եւել
 չկայի :

Գեր . — Քանի՞ տարի հետդ Իտալիա
 կեցանք :

Ծեր . — Եօթը տարի :

Գեր . — Ձմիւռնիսյ մէջ ո՞րչափ կե-
 ցանք :

Ծեր . — Ինը տարի :

Գեր . — Անկէ դուն Լիօն գացիր նէ՛
 հոն քանի՞ տարի կեցար :

Ծեր . — Տասնըմէկ տարի ալ հոն .

Գեր . — Քանի տարի է որ հոս ես :

Ծեր . — 56ին հոս եկայ :

Գեր . — 56էն մինչև 65՝ ինը տարի
 կընէ կարծեմ , տասնըմէկ տարի Լիօն
 կեցեր ես կընէ քսան տարի , Ձմիւռնիս
 9՝ կընէ 29ը . եօթը տարի ալ Իտալիա՛

եղաւ 36, քսան տարու էիր երբ մենք մէկզմէկ ճանչցանք՝ եղաւ 56. ըսել է որ պարոն Մերուն քու խօսքովդ ճիշդ 56 տարու ես հիմա:

Մեր.— Ի՞նչ կըսես աղբար, չկրնար ըլլար:

Գեր.— Տէր ողորմեա, ահա ճիշդ հաշիւը ցուցուցի քեզի, եւ որովհետեւ ինչէ խօսք առիր որ բարեկամաբար ճշմարիտը պիտի զուրցէի՝ գիտցած ըլլաս որ կարգիվիլը քու բանդ չէ, երիտասարդներն անգամ կարգուելնէն առաջ պէտք է որ աղէկ մը մաածեն, իսկ քու տարիքդ մարդիկները մտքերնուն անցունելու չեն: Աղէկ ըսեր են որ ամուսնութիւնը խենդութիւն է, քու տարիքիդ՝ խելացութիւն կը վայլէ, խենդութիւն չվայլեր. վերջապէս իմ կարծիքը՝ շուկէ շիտակ զուրցեմ քեզի, պէտք է որ ադ բամպակը ականջէդ հանես, ի՞նչ արտաւոց մարդ կըլլաս երբ մինչեւ հիմա ազատ ապրելէդ ետքը՝ աս տարիքիդ ելլաս էն ծանր շղթան ճիտդ անցունես:

Մեր.— Ես ալ քեզի բան մը ըսեմ, քանի որ պիտի կարգուիմ, իմ ուզած աղջիկս առնելու ըլլամ նէ՝ ամենեւին արտաւոց բան մը ըրած չեմ ըլլար:

Գեր.— Ատ ուրիշ, ատիկայ չըսիր ինձ իս (Շար.)

ԱՁԴ

Ներկայ 1900ի մէջ հրատարակուելիք «Վարդանանց պատերազմը կամ Վասակ Սիւնի և Վարդան Մամիկոնեան» բնական գործին տպագրութեանը գիւրութիւն մը տուած ըլլալու համար այժմէն բաժանորդագրութիւն մը բացուած է. փափաքողները թող աածին իրենց հասցէները ու բաժնեգիրը (2 Փր.) զրկել հեղինակին հասցէին.

Արտաշէս Արապետեան (բօսթ ուսութանգ) Շումլա:

Հրատարակութենէ վերջը սոյն գիրքը պիտի ծախուի 2, 70 սանդիմի:

Մ. Զ.

ՀՈՎԱՍՈՒՆ

Սիրուն բանաստեղծութեանց հատորիկ մըն է, ընթերցանութեան արժանի: Գիրն է 25 սանդիմ. շատ առնողներու համար չափաւոր զեղջ: Գիմել Զարպհանէլեան գրատուն Վառնա:

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆ

«Գայլ Վահան» սղբերգութեան հանգուցեալ հեղինակին սոյն Բ. երկն ալ կը յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը Գիրն է 1 Փրանք: Կեդրոնատեղին Վառնա Արևելեան տպարան: Օննիկ Բարսեղեան:



ՆԵՐՍԷՅ ԽԱԶԻԿԻԱՆ

և

ԼԵՒՈՆ ԱՃԷՄԵԱՆ

ՈՍԿԵՐԻՉ

Հայոց Եկեղեցիին զիմացը, Վառնա:

Ոսկերչութեան վերաբերեալ ամեն տեսակ յանձնարարութիւններ կը կատարուին գոհացուցիչ պայմաններով. արծաթի և ոսկիի վրայ ծաղկազիր փորագրութիւններ, ինչպէս նաև շատ ձեւով մատանիներ, օլեր և ապարանջաններ կը պատրաստուին: Ամէն յաճախորդներ արդէն գոհ մնացած են այս երկու վարպետներէն:

ОТГОВОРНИЧЯ М. СКОНОВЪ

Печальница „Взаимость“ — Варна.